ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2021, № 1, 71-87 *Հոգեբանություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2021.12.1.071

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոգեբանական խորհրդատվությունը սկսեց կիրառվել 1988-ի ավերիչ երկրաշարժից հետո, երբ արևմտյան տարբեր երկրներից ժամանած մասնագետները վերապատրաստեցին տեղացի մասնագետներին մի շարք ուղղություններով (ինչպես օրինակ՝ սթրեսային վիճակների, հոգետրավմայի, վշտի հաղթահարման և այլն)՝ դրանով իսկ հիմք դնելով պրակտիկ հոգեբանության ձևավորմանը Հայաստանում: Եթե պրակտիկ գործունեությունը մեծ թափ առավ ձևավորված պահանջարկով պայմանավորված, ապա հոգեբանությունը որպես գիտություն մղվեց հետին պլան և մնաց խորհրդային գիտական դպրոցի «իներցիոն շարժման» ազդեցության տակ: Ակադեմիական դաշտում հոգեբանական գիտությունը որպես այդպիսին չզարգացավ, քանի որ մասնագիտական կրթության մեջ շեշտը դրվում էր պրակտիկ մասնագետների պատրաստման վրա:

Այսօր մասնագիտական կրթության, մասնագիտական վերապատրաստումների տեսանկյունից կիրառական բնագավառի և պրակտիկ գործունեության գիտամեթոդաբանական և մտահայեցողական վերլուծությունների պակաս է զգացվում: Սա է այն անջրպետը, որի հետևանքով մինչև օրս պրակտիկան և տեսությունը կամ միջամտությունը և հետազոտությունը անհաղորդ են մնում իրար, ինչը արտացոլվում է ինչպես պրակտիկ հոգեբանների գործունեության, այնպես էլ հոգեբանական մասնագիտական կրթության մեջ: Մյուս խնդիրն այն է, որ գրեթե բոլոր պրակտիկ հոգեբանները աշխատում են արևմտյան այս կամ այն մոտեցմամբ, սակայն գիտելիքի ստացման ճանապարհը մեծամասամբ ռուսալեզու գրականությունն է, որում ամբողջությամբ արտացոլված չեն այս կամ այն բնագավառի ժամանակակից զարգացումները: Այս ամենի հետևանքով տարբեր մասնագետներ իրենց մասնագիտական նույնականությունը կառուցում են որպես հոգեթերապևտ կամ կլինիկական հոգեբան, հոգեբան-խորհրդատու կամ ուղղակի հոգեբան՝ ավելի շատ ինտուիտիվ և ոչ հիմնավորապես ըմբռնելով դրանց տարբերությունները կամ ընդհանրությունները: Այս ավանդույթը շարունակվում է մասնագետից մասնագետ որոշակի դերային մոդելներ կրկնօրինակելու միջոցով, ինչը, անշուշտ, տեղ ունի մասնագիտական

նույնականացման գործընթացում: Սակայն, միևնույն ժամանակ, մասնագիտական կրթության կամ վերապատրաստման գործընթացում խիստ անհրաժեշտություն է զգացվում վերլուծելու, հասկանալու, նույնականացնելու հոգեբանական դաշտում պրակտիկ գործունեության այս կամ այն մոտեցման ձևավորման նախադրյալները, զարգացման ուղիները՝ ի պատասխան ներկայի ու ապագայի մարտահրավերների: Սա հնարավորություն կտա մասնագետներին իրենց մասնագիտական նույնականացման մեջ լինելու ավելի խորաթափանց, գիտակ և ընդունելու ներկայիս մարտահրավերները՝ զարգացնելով իրենց գործունեությունը և ծառայեցնելով այն ի շահ մարդկանց:

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ խորհրդատվական հոգեբանության ձևավորման և զարգացման նախադրյալները, ներկա կարգավիճակը և մասնագիտական շրջանակը՝ առավելապես անդրադառնալով արևմտյան երկրների փորձին, քանի որ խորհրդատվական հոգեբանությունը՝ որպես հոգեբանության կիրառական բնագավառ, և հոգեբանական խորհրդատվությունը՝ որպես պրակտիկ գործունեություն, հենց արևմտյան քաղաքակրթության արդյունք են: Այս պատմական համեմատական ակնարկը կօգնի նաև հասկանալու, թե ինչ դերակատարում կարող է ունենալ նշյալ բնագավառը Հայաստանի հասարակական զարգացումների համատեքստում:

ԱՄՆ-ի և այլ երկրների փորձը

Թեպետ հոգեբանական խորհրդատվությունը որպես առանձին բնագավառ կայացած է շատ երկրներում, սակայն հոդվածում առավելապես կքննարկվի հոգեբանական խորհրդատվության ձևավորման և զարգացման ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի փորձը, քանի որ այս երկրներում այն առավել կենսունակ է. բացի գործնական դաշտից՝ այն ունի նաև կայացած ինստիտուցիոնալ մշակույթ: Այս երկրների փորձը տարածվեց այլ երկրներ՝ Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա և այլն:

Հոգեբանական խորհրդատվությունը որպես պրակտիկ գործունեություն և մասնագիտություն ԱՄՆ-ում սկսվեց ձևավորվել Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի (ԱՀԱ) (American Psychological Association, APA) կառուցվածքում 20-րդ դարի 40-ականներին, ինչը պայմանավորված էր տարբեր՝ պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական համակարգերի զարգացումներով[1]: Խորհրդատվական հոգեբանության բնագավառի ձևավորման և զարգացման հարցերի փորձագետ Ուայթլին (Whiteley, 1984) նշում է զարգացման հինգ վեկտորներ, որոնք մեծ ներդրում ունեցան խորհրդատվական հոգեբանության առաջընթացի և կայացման մեջ. օրինակ՝ մասնագիտական ուղեկցման

[1] Տե՛ս **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M**. (2004). Counseling psychology in the United States of America. *Counselling Psychology Quarterly*, *17*(3), էջ 247-271: DOI: 10.1080/09515070412331317602

շարժումը[2], մենթալ հիգիենայի շարժումը[3], հոգեչափումը և անհատական տարբերությունների ուսումնասիրությունները, հոգեթերապևտիկ աշխատանքի ու խորհրդատվության սերումը ոչ բժշկական և ոչ հոգեվերլուծական մոտեցումներից (մասնավորապես Կ. Ռոջերսի դասական աշխատությունից հետո)[4], սոցիալ-տնտեսական զարգացումները ԱՄՆ-ում Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, առաջ և հետո[5]: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեծ թվով վետերաններ ունեցան անձնական և մասնագիտական հարմարման խնդիրներ, ինչը մեծ դաշտ ստեղծեց հոգեբանական խորհրդատվության ձևավորման համար:

1950-ականներին տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ, որոնք ամրապնդեցին խորհրդատվական հոգեբանության կարգավիճակը: ԱՀԱ–ի 17-րդ բաժինը, որը նախկինում կոչվում էր «Խորհրդատվություն և ուղեկցում» (Counselling and Guideline), 1951 թվականին կազմակերպեց գիտաժողով (Northwestern Conference, 1951)՝ նվիրված հոգեբան-խորհրդատուների վերապատրաստման հարցերին: Այդտեղ առաջին անգամ օգտագործվեցին «խորհրդատվական հոգեբանություն» և «հոգեբան-խորհրդատու» եզրույթները, քննարկվեցին հոգեբան-խորհրդատուների մասնագիտական կրթության և վերապատրաստման, նրանց մասնագիտական գործառույթների վերաբերյալ հարցեր[6]: Գիտաժողովի պաշտոնական զեկույցում մասնավորապես նշվում է. «Հոգեբան-խորհրդատուների դերը անհատների հոգեբանական զարգացմանը նպաստելն է: Այն կարող է վերաբերել հարմարման տարբեր աստիճանի խնդիրներ ունեցող մարդկանց <…>: Խորհրդատվությունը շեշտադրում է դրական զարգացումը և կանխարգելումը» (APA, 1952a, p. 175)[7]: Գիտաժողովին

---

[2] Մասնագիտական ուղեկցման շարժումը սկսվել է 1907 թ., երբ Ֆ. Պարսոնսը ստեղծեց կարիերայի խորհրդատվության մեթոդաբանությունը, որի համաձայն՝ նախ պետք է բարելավել մարդկանց աշխատանքային պայմանները, ապա հաշվի առնել նրանց կարիքները, ինչի շնորհիվ մարդիկ կարող են համապատասխանեցնել իրենց կարողությունները գործունեության պահանջներին և նախագծել իրենց կարիերան: Այս շարժումը սկիզբ դրեց կարիերայի խորհրդատվության ձևավորմանը:

[3] Մենթալ հիգիենայի շարժման սկզբնավորումը վերագրվում է Ք. Բիրսին (Clifford Beers), երբ 1908 թ. լույս տեսավ նրա գիրքը՝ «A mind that find itself», որտեղ նա նկարագրում է իր փորձերը հոգեբուժական երեք տարբեր հաստատություններում: Այս շարժման շնորհիվ վերանայվեցին հոգեկան առողջության պահպանման և կանխարգելման ավանդական մոտեցումներն ու ձևերը:

[4] Տե՛ս **Роджерс К.** Консультирование и психотерапия: Новейшие подходы в области практической работы. М.: Изд-во Института Психотерапии, 2006 (Անգլերեն՝ **Rogers, C. R., & Carmichael, L**. (1942) Counseling and psychotherapy: Newer concepts in practice):

[5] Մեջբերումն ըստ **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M.** (2004), նշվ. աշխ., էջ 248:

[6] Տե՛ս **James W. Lichtenberg, Rodney K. Goodyear, Heidi Hutman & Emily A. Overland** (2016) Counselling psychology in the United States, Counselling Psychology Quarterly, DOI: 10.1080/09515070.2015.1127207, էջ 2:

[7] Մեջբերումն ըստ **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M.** (2004), նշվ. աշխ., էջ 250-251:

քննարկվեց նաև 17-րդ բաժինը՝ «Խորհրդատվություն և ուղեկցում»-ը, «Խորհրդատվական հոգեբանություն» վերանվանելու հարցը»:

ԱՄՆ-ի Վետերանների ադմինիստրացիան (US Veteran Admnistration) մեծ դերակատարում ունեցավ խորհրդատվական հոգեբանության՝ որպես մասնագիտության ձևավորման հարցում: Ադմինիստրացիան, հիմք ընդունելով վերոնշյալ գիտաժողովի արդյունքները, որոնք հրապարակվել են մեկ տարի անց «American Psychologist» ամսագրում, դիմեց ԱՀԱ-ին՝ ստանալու որակավորում ունեցող համալսարանների ցուցակ, որոնք կարող են դոկտորի աստիճանին համապատասխան մասնագիտական կրթություն իրականացնել «Խորհրդատվական հոգեբանություն» մասնագիտությամբ[8]: Այնուհետև, 1955 թ. Մասնագիտական հոգեբանության ազգային խորհուրդը (American Board of Professional Psychology, ABPP) որոշում ընդունեց դիպլոմում նշվող «Խորհրդատվություն և ուղեկցում» մասնագիտության անվանումը փոխարինել «Խորհրդատվական հոգեբանություն»-ով, իսկ 1956 թ. հրապարակվեց նաև 17-րդ բաժնում ստեղծված հատուկ կոմիտեի զեկույցը «Խորհրդատվական հոգեբանությունը որպես մասնագիտություն» (APA, 1956)[9]:

Այս ձեռքբերումներին 1960-ականներին հաջորդեց հոգեբանական խորհրդատվության մասնագիտության կոշտ քննադատությունը. այն նույնացվում էր կլինիկական հոգեբանության հետ, մասնավորապես՝ դոկտորի կրթական ծրագրի հարցում: Քննադատությունները խորհրդատվական հոգեբանության կարգավիճակի վերանայման հիմք դարձան, և 17-րդ բաժնի ղեկավարները ԱՄՆ-ում 1964 թ. նախաձեռնեցին երկրորդ ազգային գիտաժողովը (Greyston Conference, 1964), որը համախմբեց բաժնի անդամներին, համալսարանական ծրագրերի ղեկավարներին, մասնագիտական պրակտիկա ապահովող կազմակերպություններին[10]: Գիտաժողովի արդյունքները հրապարակվեցին զեկույցում, որը պարունակում էր նաև հանձնարարականներ հոգեբան-խորհրդատուների, համալսարանների մասնագիտական կրթական ծրագրերի, մասնագիտական վերապատրաստումներ իրականացնող տարբեր գործակալությունների համար[11]:

1960-ականների ավարտին խորհրդատվական հոգեբանությունը ամրապնդեց իր դիրքերը. արդեն երկու պաշտոնական ամսագիր ուներ: 1967 թ. ԱՀԱ-ն հրապարակեց «Counselling Psychology», իսկ 1969 թ. 17-րդ բաժինը հիմնադրեց «Counselling Psychologist» ամսագրերը[12]: 17-րդ բաժնի

---

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 251: Տե՛ս նաև **James W. Lichtenberg, Rodney K. Goodyear, Heidi Hutman & Emily A. Overland** (2016), նշվ. աշխ., էջ 2:

[9] Տե՛ս **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M**. (2004), նշվ. աշխ., էջ 251:

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 252:

[11] Ավելի մանրամասն տե՛ս **Thompson A., Super D**. (1980) Recommendations of the 1964 Greyston Conference. *The history of counseling psychology*. 174-178:

[12] Տե՛ս **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M.**, (2004), նշվ. աշխ., էջ 252-253:

մասնագիտական հարցերով զբաղվող կոմիտեն 1968 թ. խորհրդատվական հոգեբանության առավել ընդգրկուն սահմանում մշակեց, որը նաև շրջանառվեց նեղ մասնագիտական շրջանակներից դուրս՝ հանրությանը ներկայացնելով հոգեբան-խորհրդատուի գործառույթները: Այս փաստաթղթում տրվեց հոգեբան-խորհրդատուների գործառույթների համապարփակ նկարագրություն, մասնավորապես՝ հոգեբան-խորհրդատուների դերը սահմանվեց հետևյալ փոխկապված գործառույթներով՝ վերականգնողական/թերապևտիկ, կանխարգելիչ, կրթող/զարգացնող[13]:

Կարելի է ասել, որ 1970-ականներին արդեն խորհրդատվական հոգեբանությունը որպես մասնագիտություն կայացած էր: 1980-ականներին «Խորհրդատվական հոգեբանության» բազմաթիվ կրթական ծրագրեր հիմնադրվեցին և հավատարմագրվեցին: Եթե 1964 թ. ԱՀԱ-ի կողմից հավատարմագրված ծրագրերը 24-ն էին, ապա 1985 թ.՝ 44-ը, իսկ 2003-ին՝ արդեն 72-ը: Քանի որ 1980-ականների սկզբին հոգեկան առողջությունը հռչակվեց հանրային առողջության կարևորագույն մաս, իսկ օրենսդրությունը թույլ էր տալիս հոգեբաններին փոխհատուցման սկզբունքով ծառայություններ մատուցել մասնավոր դաշտում, ապա շատ հոգեբան-խորհրդատուներ հետաքրքրված էին մասնավոր պրակտիկայով: Այս ամենը նպաստեց, որ հոգեբան-խորհրդատուների հոգեթերապևտիկ/վերականգնողական գործառույթն ավելի ազդեցիկ դարնա[14]:

Երրորդ կարևոր համազգային գիտաժողովը տեղի ունեցավ 1987 թ. Աթլանտայում: Քննարկվող հրատապ թեմաներից էին գիտնական-պրակտիկ աշխատողի մոդելի կարևորումը և վերահաստատումը մասնագիտական կրթության մեջ, ինչպես նաև խորհրդատվական հոգեբանության ձևավորման ավանդական գծերը՝ ներառյալ կանխարգելումը, զարգացումը ողջ կյանքի ընթացքում, մասնագիտական առաջընթացը և հմտությունների ձևավորումը, ինչպես նաև հոգեբան-խորհրդատուների ոչ ավանդական գործառույթները: Քննարկվեցին նաև կարևոր այլ հարցեր, որոնք ուրվագծեցին խորհրդատվական հոգեբանության հետագա զարգացումը, ինչպես օրինակ՝ մշակույթի, էթնիկության, գենդերային տարբերությունների և բազմազանության խնդիրները[15]:

20-րդ դարի կեսերին ԱՄՆ-ում հասարակական զարգացումները՝ մարդու իրավունքների շարժումը, սեգրեգացիայի դեմ շարժումը, կանանց շարժումը, Վիետնամի պատերազմը, հանգեցրին այն բանի գիտակցմանը, որ փոքրամասնություն կազմող խմբերի շահերը մերժվում

---

[13] Խորհրդատվական հոգեբանության սահմանման, հոգեբան-խորհրդատու դերի, գործառույթների, աշխատանքային ոլորտների և մասնագիտական կրթության մասին ավելի մանրամասն տե՛ս **Jordaan, J., Myers, R. A., Layton, W. L., & Morgan, H. H.** (1980) The counseling psychologist: A definition in 1968. *The history of counseling psychology*, էջ 179-195:

[14] Տե՛ս **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M.** (2004), նշվ. աշխ., էջ 253-254:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 254:

են: Կիրառական հոգեբանության բոլոր բնագավառները, այդ թվում և խորհրդատվական հոգեբանությունը, քննադատվեցին այս տեսանկյունից, քանի որ դրանք ուղղված էին հասարակության մեծամասնության՝ միջին խավի կարիքներին: Այս ամենն ազդեց ԱՄՆ-ում 1980-ականներին և 1990-ականներին խորհրդատվական հոգեբանության հետագա զարգացման վրա: Ինչպես նշում են Ջելսոնն ու Ֆրետսը (Gelso and Fretz, 2001), խորհրդատվական հոգեբանությունը դարձավ բոլոր այլ կիրառական բնագավառներից առաջատարը բազմամշակութային խնդիրներին ուշադրություն դարձնելու տեսանկյունից՝ մշակելով պրակտիկ աշխատանքի ուղեցույցներ և կոմպետենցիաներ տարբեր խմբերի այցելուների հետ աշխատանքի համար[16]: Խորհրդատվական հոգեբանությունը նաև հետազոտական բազմազանություն ներառեց հետազոտական գործունեության մեջ. կարևորվեցին ոչ միայն պոզիտիվիստական հարացույցով կատարվող, այլև որակական մեթոդաբանությամբ իրականացվող ուսումնասիրությունները[17]:

Մեկ այլ իրադարձություն, որը վերահաստատեց խորհրդատվական հոգեբանությունը որպես մասնագիտություն հոգեբանական մասնագիտությունների շարքում, հետևյալն էր: 1995-ին ԱՀԱ-ն հիմնեց Հոգեբանական մասնագիտությունների և մասնագիտական կոմպետենցիաների ճանաչման հանձնախումբ (Commission for the Recognition of Specialties and Proficiencies in Professional Psychology, CRSPPP), որի գործունեությունն ուղղված էր օգնելու ԱՀԱ-ին՝ վերահաստատելու արդեն առկա կամ հաստատելու նոր հոգեբանական մասնագիտությունները[18]: 17-րդ բաժինը պետք է անցներ այս գործընթացը, ինչի համար Խորհրդատվական հոգեբանության մասնագիտական պատրաստման ծրագրերի խորհրդի (The Council of Counseling Psychology Training Programs (CCPTP)) հետ համատեղ հիմնադրեց հանձնախումբ (Joint Writing Committee)՝ մշակելու խորհրդատվական հոգեբանության կրթական ծրագրի մոդել (Model Training Program in Counseling Psychology)՝ ըստ ԱՀԱ-ի կողմից հավատարմագրման նոր ուղենիշների և սկզբունքների: Այն մշակվեց մասնագիտության սահմանմանը զուգահեռ և հավանության արժանացավ 17-րդ բաժնի և CCPTP-ի կողմից 1998 թ., իսկ 1999 թ. ԱՀԱ-ն խորհրդատվական հոգեբանությունը վերստին պաշտոնապես ճանաչեց որպես հոգեբանական մասնագիտություն[19]: Այն սահ-

---

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 255:

[17] Բազմամշակութայնության և բազմազանության ազդեցության մասին ավելի մանրամասն տե՛ս **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M.** (2004), նշվ. աշխ., էջ 254-256:

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 257:

[19] Խորհրդատվական հոգեբանության կրթական ծրագրի մոդելի մշակման պատմության, ներկայիս կարգավիճակի և նշանակության մասին ավելի մանրամասն տե՛ս **Scheel, Michael J., Sally D. Stabb, Tracy J. Cohn, Changming Duan, and Eric M. Sauer** (2018) Counseling psychology model training program. *The Counseling Psychologist* 46, № 1, էջ 6-49: DOI:10.1177/0011000018755512

մանումը, որը տրվեց հոգեբանական խորհրդատվությանը, արդիական է մինչ այսօր. «Խորհրդատվական հոգեբանությունը ընդհանուր պրակտիկ գործունեություն և առողջությանն առնչվող ծառայություններ մատուցող մասնագիտություն է հոգեբանության մեջ: Այն կենտրոնանում է մարդկանց անձնային և միջանձնային ողջ կյանքի գործառության հարցերի վրա և զբաղվում է հուզական, սոցիալական, մասնագիտական, կրթական, առողջությանն առնչվող, զարգացման և կազմակերպչական հարցերով: <…> Հոգեբան-խորհրդատուները օգնում են մարդկանց, որոնք ունեն ֆիզիկական, հուզական, հոգեկան առողջության խնդիրներ, լավացնել իրենց կյանքը, մեղմացնել դիսթրեսը և դեզադապտացիան և հաղթահարել ճգնաժամերը…»[20]:

Չորրորդ կարևոր գիտաժողովը տեղի ունեցավ 2001-ին Հյուսթոնում, Տեխաս նահանգում՝ «Խորհրդատվական հոգեբանություն. կատարելով փոփոխություններ» (“Counseling Psychologists: Making a Difference”) խորագրով: Այս գիտաժողովը տարբերվում էր նախորդներից, քանի որ այն միայն մասնագետների համար չէր, այլև բոլոր ցանկացողների[21]: Գիտաժողովում քննարկվող կարևոր խնդիրներից էին մասնագիտական համագործակցությունը խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ, կրթության և պրակտիկայի արդյունավետ փոխկապակցումը, սոցիալական շահերի պաշտպանությունը/սոցիալական հարցերի ջատագովությունը սոցիալական ակտիվ խմբերի միջոցով: Սոցիալական ակտիվ խմբերի մասնակցության գաղափարը կարևոր ներդրում էր գիտաժողովի աշխատանքներում, քանի որ դիտարկվեցին անհատի հետ տարվող աշխատանքից բացի, այլ հարցեր ևս, ինչպես օրինակ՝ համայնքային կամ ընտանեկան բռնությունը, երախաների շահագործումը, ռասիզմը, սոցիալական արդարությունը և էթիկայի խնդիրները հոգեբանական խորհրդատվության մեջ: Գիտաժողովի արդյունքում մշակվեցին հանձնարարականներ 17-րդ բաժնի և CCPTP–ի համար՝ ներառելու սոցիալական հարցերը մասնագիտական կրթական ծրագրերում, պրակտիկ աշխատանքում և հետազոտության մեջ: Գիտաժողովը եզրակացրեց, որ խորհրդատվական հոգեբանությունը լայն սահմանում ունեցող մասնագիտություն է և պետք է կարևոր դեր խաղա հոգեբանության հետագա զարգացման գործում: Նշվեց, որ «Միավորում բազմազանության միջոցով» թեզը պետք է շարունակի մնալ կարևոր հիմնաքարը ԱՄՆ-ում խորհրդատվական հոգեբանության ապագայի համար[22]:

Քանի որ ԱՀԱ-ի կազմում մասնագիտական բաժիններից շատերը

---

[20] **Lichtenberg, J. W.** (1999) Archival Description of Counseling Psychology. *The Counseling Psychologist*, *27*(4), 589–592: DOI:10.1177/0011000099274006

[21] Տե՛ս **Fouad, N. A.** (2002). 2001 presidential address: Dreams for 2010: Making a difference. *The Counseling Psychologist*, *30*(1), 158-166: DOI:10.1177/0011000002301014

[22] Ավելի մանրամասն տե՛ս **Munley, P. H., Duncan, L. E., Mcdonnell, K. A., & Sauer, E. M.** (2004), նշվ. աշխ., էջ 258:

վերաձևավորվեցին և դարձան միություններ, 2003-ին 17-րդ բաժինը պաշտոնապես փոխեց իր անվանումը՝ դառնալով Խորհրդատվական հոգեբանության միություն (Society of Counselling Psychology), ինչը նպաստեց կազմակերպչական տեսանկյունից ինքնավարությանը և մասնագիտական ինքնության հաստատմանը (APA Division 17, 2000)[23]:

Մեծ Բրիտանիայում խորհրդատվական հոգեբանությունը ձևավորվեց որպես մասնագիտություն, երբ Բրիտանական հոգեբանական ասոցիացիան 1982 թ. հիմնադրեց Խորհրդատվական հոգեբանության բաժանմունքը, որն արդեն 1994 թ. դարձավ լիիրավ բաժին իր կառուցվածքում: Խորհրդատվական հոգեբանության բաժինը (Division of Counselling Psychology. DCoP) ներկայումս ունի շուրջ 3500 անդամ, մասնաճյուղեր Հյուսիսային Իռլանդիայում, Շոտլանդիայում, Ուելսում: Բաժնի պաշտոնական ամսագիրն է «*Counselling Psychology Review*»-ն: Հոգեբան-խորհրդատու մասնագետը, ինչպես և այլ պրակտիկ՝ կլինիկական, կրթության, իրավաբանական, աշխատանքային ոլորտների մասնագետները գրանցվում են Առողջության պահպանման և խնամք իրականացնող մասնագետների խորհրդի (Health and Care Professions Council, HCPC) կազմում: Վերջինս պառլամենտի ենթակայության մարմին է, որը կարգավորում է մասնագիտական կրթությանն ու աշխատանքի որակին առնչվող հարցեր: Թեպետ Բրիտանական հոգեբանական ասոցիացիայի Խորհրդատվական հոգեբանության բաժինը ներկայացուցչական մարմին է, որը համագործակցում է պետական կառույցների հետ մասնագիտական կրթության և աշխատանքի ստանդարտների մշակման ուղղությամբ, գոյություն ունեն հեղինակություն վայելող մասնագիտական այլ կազմակերպություններ ևս, ինչպես օրինակ՝ Խորհրդատվության և հոգեթերապիայի բրիտանական ասոցիացիան (Britsh Association for Counselling and Psychotherapy, BACP), Ազգային խորհրդատվական միությունը (National Counselling Society, NCS)[24]: Հոգեբան-խորհրդատուները աշխատում են հոգեկան առողջության ոլորտի տարբեր կազմակերպություններում և լավ գնահատված են հարակից մասնագետների կողմից: Շատ հաճախ հոգեբան-խորհրդատուները և կլինիկական հոգեբանները դիմում են Ազգային առողջապահական ծառայություն (National Health System) միևնույն աշխատանքային տեղերի համար, սակայն աշխատանքում մոտեցումները տարբերվում են: Հոգեբան-խորհրդատուների գործունեության մեթոդաբանությունն ունի ինտեգրատիվ բնույթ. կիրառվում են հոգեթերապևտիկ տարբեր մոտեցումներ, իսկ կլինիկական հոգեբանները նախապատվությունը տալիս են կոգնիտիվ-բիհևիորալ մոտեցմանը՝ կենսաբժշկական մոդելին զուգահեռ[25]:

---

[23] Տե՛ս նույն տեղը, էջ 258:

[24] Տե՛ս **Jessica D. Jones Nielsen & Helen Nicholas** (2016) Counselling psychology in the United Kingdom, Counselling Psychology Quarterly: DOI: 10.1080/09515070.2015.1127210

[25] Տե՛ս նույն տեղը, էջ 6:

Ինչ վերաբերում է մասնագիտական ինքնության հարցերին, ապա Բրիտանիայում հոգեբան-խորհրդատուները ևս իրենց աշխատանքում առաջնորդվում են հումանիստական արժեքներով և փիլիսոփայությամբ՝ նպատակ ունենալով բարելավել մարդկանց սուբյեկտիվ բարեկեցությունը, նվազեցնել տարբեր հանգամանքներով պայմանավորված դիսթրեսը՝ կենտրոնանալով մարդու սուբյեկտիվ փորձառության վրա: Հոգեբան-խորհրդատուները նաև կարևորում են թերապևտիկ հարաբերությունները հոգեխորհրդատվական աշխատանքում և դրա միջոցով են աշխատում հաղթահարել հոգեբանական դժվարությունները: Խորհրդատվական հոգեբանության բաժնի հրատարակած մասնագիտական պրակտիկայի ուղեցույցում տրվում է հետևյալ սահմանումը. «Խորհրդատվական հոգեբանությունը առանձին ճյուղ է մասնագիտական հոգեբանության պրակտիկ ոլորտում, որը հարստացել է հումանիտար գիտության և առանցքային հոգեթերապևտիկ ավանդույթներով: Հոգեբանական խորհրդատվությունը հիմնվում է պրակտիկ գործունեության ֆենոմենոլոգիական մոդելների վրա և զարգացնում է դրանք՝ ի լրումն ավանդական հոգեբանական գիտության մոդելների: <…> Խորհրդատվական աշխատանքի մոդելը ձգտում է՝ ա) հասկանալ անձի սուբյեկտիվ և ինտերսուբյեկտիվ փորձառությունը, արժեքները և համոզմունքները, բ) էմպաթիկ ճանապարհով հասկանալ և հարգել այցելուի կողմից ներկայացված փորձառությունը՝ իր իսկ ըմբռնումներով, ինչպես նաև լուսաբանել, մեկնաբանել, բանակցել տարբեր ընկալումների ու աշխարհընկալման շուրջ, և չընդունել՝ ակամա նախապատվություն տալով որևէ գիտելիքի, փորձառության, զգացմունքի, արժեքի, գ) առաջնորդվել առաջացած պրակտիկ խնդիրներով, բայց միևնույն ժամանակ արժևորել հետազոտահեն մասնագիտական պրակտիկան, ինչպես նաև մասնագիտական արհեստավարժությունը, դ) ճանաչել հասարակական համատեքստն ու խտրականությունը և միշտ աշխատել ոչ թե վերահսկման, այլ հզորացման ճանապարհով, ինչպես նաև ներկայացնել հակախտրական պրակտիկաների բարձր ստանդարտներ, ինչը համահունչ է ներկայիս պլյուրալիստական հասարակությանը»[26]:

Հոգեբան-խորհրդատուների համար հիմնական մարտահրավերը Մեծ Բրիտանիայում աշխատատեղերի սղությունն է: Քանի որ առողջապահության ոլորտի ֆինանսավորումը մեծամասամբ պետության հոգածության ներքո է, իսկ պրակտիկ հոգեբանների, այդ թվում հոգեբան-խորհրդատուների մեծ մասը աշխատում է հոգեկան առողջության ոլորտում, ապա կա մեծ մրցակցություն աշխատատեղերի համար: Մյուս կողմից՝ ծառայությունների մատուցման տնտեսական քաղաքականությունը ևս փոխվում է. շեշտը դրվում է արդյունավետ միջամտու-

[26] *Guidelines for Professional Practice in Counselling Psychology*, Division of Couselling Psychology, BPA, file:///C:/Users/David/Desktop/Counselling/Counseling/professional_practice_guidelines_-_division_of_counselling_psychology.pdf, p. 1-2:

թյան վրա տնտեսապես մատչելի ծառայություններով: Հոգեկան առողջության պահպանմանը միտված ծառայությունների կարիքը մեծանում է, և այս ոլորտում մշակվող քաղաքականություններն ու ներդրումներն ուղղվում են վաղ միջամտությանն ու կանխարգելմանը: Սա հոգեբան-խորհրդատուների գործունեության մեծ դաշտ է բացում, որի հիմքում ընկած է անձնակենտրոն, կանխարգելող և ոչ ախտանիշակենտրոն, շտկող մեթոդաբանությունը[27]:

Կանադայում խորհրդատվական հոգեբանությունը զարգացման մեծ աճ է գրանցում վերջին 30 տարում: 1986 թ. Կանադայի հոգեբանական ասոցիացիան (Canadian Psychological Association, CPA) իր կառուցվածքում ստեղծեց խորհրդատվական հոգեբանության բաժանմունք (Section of Counselling Psychology): Այն անդամների թվով երրորդն է Կանադայի հոգեբանական ասոցիացիայում: Մինչ այդ ձևավորվել էր նաև Կանադայի խորհրդատվության և ուղեկցման ասոցիացիան (Canadian Counselling and Guidance Association), որը այժմ կոչվում է Կանադայի խորհրդատվության և հոգեթերապիայի ասոցիացիա (Canadian Counselling and Psychotherapy Association, CCPA): Սակայն, այս ամենով հանդերձ, խորհրդատվական հոգեբանության սահմանումը՝ որպես հոգեբանության բնագավառ, միայն 2009 թ. պաշտոնապես հավանության արժանացավ[28]: Սահմանումը շատ նմանություններ ունի ամերիկյան ավանդույթի հետ, մասնավորապես շեշտադրվում են անհատների, ընտանիքների/խմբերի, համայնքի զարգացման, բարեկեցության աճի, ինչպես նաև հոգեկան առողջության պահպանման հարցերը: Վերականգնողական/հոգեթերապևտիկ գործառույթի հետ մեկտեղ՝ հոգեբան-խորհրդատուները իրականացնում են նաև հոգեկրթություն, կանխարգելիչ աշխատանք, սոցիալական շահերի պաշտպանություն:

Ավստրալիայում խորհրդատվական հոգեբանությունը ձևավորվել է 1970-ականներից: Երկար քննարկումներից հետո 1976 թ. ստեղծվեց Խորհրդատվական հոգեբանության բաժինը Ավստրալիական հոգեբանական ասոցիացիայի կառուցվածքի մեջ, իսկ 1993-ից այն ստացավ «Խորհրդատվական հոգեբանության քոլեջ» անվանումը[29]: Խորհրդատվական հոգեբանության սահմանումն ունի նմանություններ վերը դիտարկված երկրների սահմանումների հետ, իսկ հոգեբան-խորհրդատուները աշխատում են տարբեր ոլորտներում. մեծ մասը իրականացնում է մասնավոր պրակտիկա, սակայն հոգեբան-խորհրդատուները նաև ներգրավված են հոգեկան առողջության համայնքային կենտրոն-

---

[27] Տե՛ս **Jessica D. Jones Nielsen & Helen Nicholas** (2016), նշվ. աշխ., էջ 7-9:

[28] Տե՛ս **Robinder Paul Bedi, Ada Sinacore & Kayla D. Christiani** (2016) Counselling Psychology in Canada, Counselling Psychology Quarterly, 29:2, 150-162: DOI:10.1080/09515070.2015.1128398

[29] Տե՛ս **Michael A. Di Mattia & Jan Grant** (2016) Counselling Psychology in Australia: History, status and challenges, Counselling Psychology Quarterly, 29:2, էջ 139-149: DOI: 10.1080/09515070.2015.1127208

ներում, համալսարանական խորհրդատվական կենտրոններում, հիվանդանոցներում: Ավստրալիայում որոշակի լարվածություն է առկա առողջապահական համակարգում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց հոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների միջև: Պետական ծրագրի համաձայն՝ հոգեբանները կարողանում են երկու տեսակի ծառայություն մատուցել. առաջինը վերապահված է միայն կլինիկական հոգեբաններին, որոնք ծառայություն են մատուցում համալիր կամ քրոնիկ հոգեկան խանգարում ունեցող մարդկանց (ծառայության արժեքը ավելի բարձր է), իսկ հոգեբանության որակավորում ունեցող բոլոր մյուս մասնագետները, այդ թվում հոգեբան-խորհրդատուները, հոգեբանական աջակցություն են տրամադրում հոգեկան առողջության ավելի թեթև խնդիրներ ունեցող մարդկանց (այդ ծառայությունների արժեքը համեմատաբար ցածր է): Այս տարբերակումը բարձրացրեց կլինիկական հոգեբանների կարգավիճակը, որի հետևանքով կրճատվեցին «Հոգեբանություն» մասնագիտությամբ կրթական այլ ծրագրեր, քանի որ ձգտում կար ձեռք բերել կլինիկական հոգեբանի որակավորում[30]:

Հոգեբանական մասնագիտական կազմակերպություններն Ավստրալիայում իրականացնում են շահերի պաշտպանության տարբեր միջոցառումներ պրակտիկ հոգեբանների, այդ թվում հոգեբան-խորհրդատուների կարգավիճակի ամրապնդման ուղղությամբ, սակայն կլինիկական հոգեբանների՝ որպես հոգեկան առողջության ոլորտում հոգեբանության որակավորում ունեցող եզակի մասնագտներ լինելու լոբբինգը իր դերն է խաղում: Ի տարբերություն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի, որտեղ կլինիկական հոգեբանները և հոգեբան-խորհրդատուները մատուցած ծառայությունների համար հավասարապես ենթակա են ապահովագրական վճարման, կրթական ծրագրերը հավատարմագրվում են նույն սկզբունքներով և աշխատանքի հնարավորությունները նույնն են, ապա Ավստրալիայում մասնագիտական շահերի պաշտպանության խնդիրը դեռևս լուծված չէ:

Ինչպես տեսնում ենք, տարբեր երկրներում գոյություն ունեն և՛ նմանություններ, և՛ տարբերություններ[31]: Ընդհանրացնելով կարելի է նկատել, որ մասնագիտական ինքնության և մեթոդաբանության հարցերը նույնն են, սակայն խորհրդատվական հոգեբանության՝ որպես մասնագիտության ինստիտուցիոնալացման ճանապարհները տարբերվում են:

---

[30] Տե՛ս նույն տեղը, էջ 141-142:

[31] Տե՛ս **Pelling, N.** (2004). Counselling psychology: Diversity and commonalities across the Western World. Counselling Psychology Quarterly, Vol. 17, № 3, 2004, էջ 239–245: doi.org/10.1080/09515070412331317611

Խորհրդատվական հոգեբանության և հոգեխորհրդատվության զարգացման հեռանկարները և մարտահրավերները

Պատկերացում տալու համար, թե որն է խորհրդատվական հոգեբանության առանցքը ներկայումս, և ինչ խնդիրներ են քննարկվում ապագա միտումներից ելնելով, անդրադարձ կատարենք միջազգային ուսումնասիրություններին, որոնք իրականացվել են տարբեր երկրներում խորհրդատվական հոգեբանության մասնագիտության նմանությունները և տարբերությունները վեր հանելու նպատակով, և հասկանալու, թե ինչն է միավորում մասնագիտական գործունեության մեջ հոգեբան-խորհրդատուներին տարբեր երկրներում: 2016 թ. իրականացված միջազգային ուսումնասիրության արդյունքները, որին մասնակցել է ութ երկիր (Ավստրալիա, Կանադա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա, Հարավային Կորեա, Թայվան, Մեծ Բրիտանիա և ԱՄՆ), ցույց են տվել, թե որ տասը հիմնական արժեքներն են ընկած հոգեբան-խորհրդատուների աշխատանքի հիմքում: Դրանք են՝ ուժեղ կողմերի վրա հիմնված մոտեցումը, բազմամշակութայնությունը և բազմազանությունը, անձ-միջավայր փոխհարաբերությունը, անձի զարգացման սկզբունքի շեշտադրումը, փաստերի վրա հիմնված պրակտիկան, ջատագովությունը (շահերի պաշտպանությունը) և սոցիալական արդարությունը, ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև միջամտությունը, կանխարգելումը, խորհրդատվությունը կարիերայի հարցերում և քիչ քանակով հետազոտություններ իրականացնելը: Այս բոլոր արժեքների կիրառման հաճախականությունը տարբեր է բոլոր 8 երկրներում, սակայն առաջին երկուսը՝ ուժեղ կողմերի վրա հիմնված մոտեցումը և բազմամշակութայնությունը ու բազմազանությունը, կայուն առաջին դիրքերում են[32]:

2018 թ. իրականացված ուսումնասիրության ժամանակ հարցում է կատարվել ԱՄՆ-ի բուհերի՝ ԱՀԱ-ի կողմից հավատարմագրված «Խորհրդատվական հոգեբանության» կրթական ծրագրի գիտական ղեկավարների շրջանում[33]: Հարցման նպատակներից է եղել պարզել, թե որոնք կլինեն խորհրդատվական հոգեբանության առանցքային թեմաները 10 տարի հետո[34]: Այս ուսումնասիրության մեթոդաբանությունը հարմարեցվել էր 2001թ. հետազոտությանը և նպատակ ուներ բացահայտել՝

---

[32] Տե՛ս **Goodyear, R., Lichtenberg, J., Hutman, H., Overland, E., Bedi, R., Christiani, K., ... & Young, C.** (2016). A global portrait of counselling psychologists' characteristics, perspectives, and professional behaviors, Counselling Psychology Quarterly, 29:2, 115-138, DOI: 10.1080/09515070.2015.1128396, էջ 130-133:

[33] Տե՛ս **Jennifer M. Taylor, Alexandra Z. Kolaski, Hannah Wright, Halleh Hashtpari & Greg J. Neimeyer,** (2019) Predicting the evolution of counseling psychology in the United States: results from a Delphi poll of academic training directors, Counselling Psychology Quarterly, 32:2, 169-185: DOI: 10.1080/09515070.2018.1428169

[34] Հարցման մյուս բաժինները վերաբերում էին հետազոտության, կրթական ծրագրերի և մասնագիտական վերապատրաստման հարցերին: Սակայն, տվյալ հոդվածի շրջանակներից ելնելով, կներկայացնենք ուսումնասիրության միայն առաջին նպատակի արդյունքները:

ինչ է փոխվել 10 տարի անց։ Հարցման արդյունքները ցույց են տվել, որ խորհրդատվական հոգեբանության զարգացման առաջին հինգ կարևոր թեմաներն են՝ պարտավորություններ բազմազանության հարցերում, պարտավորություններ սոցիալական արդարության հարցերում, անհատական խորհրդատվություն և հոգեթերապիա, հետազոտություններ և ծրագրերի գնահատման հմտություններ, հոգեկան առողջության ոլորտում հարմարմանը և կանխարգելմանը նպաստող մեթոդների հստակեցում։ Ի տարբերություն 2001 թ. ուսումնասիրության[35], որտեղ ընտանեկան խորհրդատվությունն ու հոգեթերապիան, ինչպես նաև կազմակերպչական ոլորտում աշխատանքի հմտությունները դիտարկվել էին զարգացման ուղիներ 2011 թ. համար, այս ուսումնասիրության մեջ վերջիններս զիջել էին դիրքերը։

Եթե դիտարկենք Հայաստանում հոգեբանական խորհրդատվության զարգացման միտումները, ապա կարելի է որոշակի զուգահեռներ տանել և ուրվագծել հետագա զարգացման ուղղությունները։ Անշուշտ, յուրաքանչյուր երկրում որևէ ոլորտի, տվյալ դեպքում հոգեբանական խորհրդատվության զարգացումը ունի իր յուրահատկությունները՝ պայմանավորված պատմաքաղաքական տարբեր բնույթի իրադարձություններով, ինչպես նաև կրթական, սոցիալական և առողջապահական ոլորտների քաղաքականությունների մշակմամբ և իրականացմամբ։ Մեր պարագայում հոգեբանական խորհրդատվության՝ որպես պրակտիկ գործունեության ձևավորումը և հետագա զարգացումը անշուշտ պայմանավորված էր, ինչպես վերևում նշվել է, 1988 թ. երկրաշարժի հետևանքներով և հասարակության մեջ աստիճանաբար հոգեբանական աջակցություն ստանալու կարիքի գիտակցմամբ, ինչպես նաև կրթական համակարգում առաջին հերթին ներառական կրթության ներդրմամբ։

Հոգեբանական խորհրդատվության առաջին կրթական՝ մագիստրոսական ծրագիրը ներդրվեց ԵՊՀ-ում 2009 թ.՝ բարձրագույն կրթության ոլորտում երկաստիճան կրթական համակարգի անցնելով։ Կրթական ծրագիրը միավորեց մասնագետների, որոնք զբաղվում էին ինչպես անձի զարգացման, Ես-ի և ինքնության, անձ-սոցիալական միջավայր փոխազդեցության հիմնախնդիրների ուսումնասիրություններով, այնպես էլ իրականացնում էին պրակտիկ գործունեություն (հիմնականում անհատական, ընտանեկան խորհրդատվություն, մանկան հոգեթերապիա և կրթական ոլորտում խորհրդատվություն)։ Կրթական ծրագրի արդեն 10-ամյա փորձը, ինչպես նաև կրթական ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները[36] ցույց են տալիս, թե

---

[35] Տե՛ս **Neimeyer, G. J., & Diamond, A. K**. (2001). The anticipated future of counselling psychology in the United States: A Delphi poll. *Counselling Psychology Quarterly*, *14*(1), էջ 49-65: DOI: 10.1080/09515070125262

[36] Ուսումնասիրությունները իրականացվել են մագիստրոսների կողմից «Մասնագիտության արդի հիմնախնդիրներ» առարկայի շրջանակում 2015-2020 թթ։

ինչ ուղղություններով է զարգանում հոգեբանական խորհրդատվությունը, և ինչ խնդիրներ ու մարտահրավերներ կան։ Այժմ առավել պահանջված է անհատական, ընտանեկան խորհրդատվությունը, ինչպես նաև երեխաների հետ հոգեբանական աջակցության աշխատանքը, և շատ հոգեբան-խորհրդատուներ աշխատում են հենց այս ուղղություններով։ Նախադպրոցական հաստատություններում և միջնակարգ կրթական համակարգում որպես մասնագիտական պրակտիկա հաստատվել է հոգեբանական խորհրդատվության ծառայությունը, սակայն ոչ բարձրագույն կրթական համակարգում։ Կարելի է նաև ասել, որ սոցիալական ոլորտում խոցելի խմբերի հետ հոգեբանական աջակցության աշխատանքի լավ պրակտիկա է ձևավորվել. մասնավորապես, անապահով ընտանիքների աջակցության, կանանց և երեխաների բռնության կանխարգելման միջոցառման շրջանակներում ներդրված են հոգեբանական աջակցության ծրագրեր։

Ոլորտի ապագա զարգացումները տեսանելի են առողջապահական և սոցիալական ոլորտներում բարեփոխումներին զուգահեռ, մասնավորապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց, ինչպես նաև խոցելի խմբերի՝ սոցիալական ներառմամբ պայմանավորված։ Սա հնարավորություն կտա հոգեբան-խորհրդատուներին աշխատելու համայնքային կենտրոններում։ Այս առումով մարտահրավերներ կարող են լինեն աշխատանքի մեթոդաբանության հարցերը, քանի որ հոգեբանական աջակցության աշխատանքները այս կարգի կառույցներում ենթադրում են ոչ թե դասական հոգեթերապևտիկ տրամաբանությամբ աշխատանք, այլ աշխատանք անձի և համայնքի, սոցիալական միջավայրի ուժեղ կողմերի հետ, աշխատանք անձի զորեղացման և զարգացնող միջավայր ստեղծելու ուղղությամբ։

Թեպետ մեր հասարակությունը բազմամշակույթ չէ, ինչպես արևմտյան շատ երկրներում, և առաջին հայացքից կարող է թվալ, որ բազմամշակութայնության և բազմազանության խնդիրը արդիական չէ մեզանում, սակայն մեր հասարակությունը միատար չէ, և ներմշակութային տարբերությունները ցայտուն են։ Դրանք կարող են պայմանավորված լինել քաղաքի և մարզերի կենսակերպի տարբերություններով, մասամբ՝ տեղացի հայերի և սփյուռքահայերի միջև տարբերություններով։ Մեծ թվով սփյուռքահայերի ներհոսքը, ինչպես նաև միգրացիան, տարբեր փոքրամասնությունների առկայությունը նույնպես կարելի է դիտարկել բազմազանության խնդրի ներքո։ Այս իմաստով բազմազանության ուսումնասիրությունները և վերջինիս նկատմամբ զգայուն լինելը պրակտիկ գործունեության մեջ ևս կարևոր մարտահրավեր են մեզ համար։

Պատերազմական իրողությունը արդիական է մեզանում վերջին տարիների ընթացքում։ Պետք է փաստել, որ զինվորական անձնակազմի հետ որոշակի աշխատանքներ են տարվում մասնավորապես հոգեբանական պատրաստվածության տեսանկյունից։ Սակայն բացեր ունենք

պատերազմից վերադարձած զինծառայողների սոցիալ-հոգեբանական վերականգման և վերաինտեգրման, նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական աջակցության հարցերում, ինչը ուղղակիորեն վերաբերում է խորհրդատվական հոգեբանությանը: Այդ է վկայում ԱՄՆ-ի փորձը:

Քաղաքացիական ինստիտուտների զարգացման շնորհիվ մեծ հնարավորություններ են բացվում նաև սոցիալական արդարության և քաղաքացիական ակտիվության դաշտում, ինչը կարող է ենթադրել ինչպես հոգեբանական աջակցության աշխատանք իրավապաշտպանների, ակտիվիստների հետ, մասնավորապես, աշխատանք հուզական այրման, սպառնալիքներին և մանիպուլյացիաներին դիմակայելու վերաբերյալ, այնպես էլ մարդու իրավունքների, սոցիալական արդարության, շահերի պաշտպանության ծրագրերի մշակման շրջանակներում:

Մեզանում ցանկացած ոլորտում խնդիր է ապացուցահեն պրակտիկայի բացակայությունը, ինչը ենթադրում է «գիտնական-պրակտիկ մասնագետ» (scientist-practitioner model) աշխատանքային մոդելը: Բավականաչափ ուշադրություն չի դարձվում ծրագրերի, ծառայությունների արդյունավետության գնահատման հմտությունների ձևավորմանը, որը կուժեղացնի ապացուցահեն պրակտիկան: Պատճառն այն է, որ հոգեբանական կրթության մեջ արմատացած չէ հետազոտություններ իրականացնելու լուրջ պահանջը: Չնայած բազում ջանքերին և ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի չափորոշիչների պահանջին՝ այս խնդիրը լիարժեք գիտակցված և հասկացված չէ նաև հոգեբանների շրջանում, ինչը ազդում է կրթության որակի և ուսանողների մասնագիտական կրթությունից ակնկալիքների վրա:

Վերջում թերևս պետք է նշել ամենահիմնական մարտահրավերը՝ մասնագիտական համագործակցության և «գործուն» մասնագիտական միավորումների բացակայությունը: Ինչու է սա կարևոր մասնագիտությանը զարգացման համար: Ներկայումս հոգեբանության այս կամ այն կիրառական մասնագիտությունը զուգակցվում է բուհի կրթական ծրագրի հետ, ավելին՝ վերջինս է որոշում մասնագիտական ինքնությունը: Սա բավարար չէ, քանի որ սահմանված չեն բնագավառի կողմնորոշիչները կրթական ծրագրի որակի գնահատման և զարգացման տեսանկյունից: Մյուս կողմից՝ մասնագիտական միավորումների բացակայությունը թույլ չի տալիս «մասնագիտորեն» դիրքավորվել և հասարակությանը ներկայացնել մասնագիտական գործունեության գաղափարական հիմքերը և էթիկական սկզբունքները: Այս դեպքում տարբեր «իշխանական» (ինստիտուցիոնալացված) կառույցներ կարող են պատվիրել ծառայություններ և դրանով իսկ թելադրել բնագավառի զարգացման հետագա ուղղությունը: Անշուշտ կարևոր է հաշվի առնել հասարակական տարբեր կարիքներ, սակայն շատ հաճախ դրանք հստակ վերլուծված չեն լինում, ծառայում են կազմակերպությունների «շահերին» և սովորաբար հանգում են կոնկրետ պրակտիկ հմտությունների փոխանցմա-

նը: Մասնագիտական միավորումները անհրաժեշտ են ինստիտուցիոնալացված համակարգ ստեղծելու համար, միգուցե ոչ այնքան բարդ, ինչպես Արևմուտքում, որը, սակայն, կսահմանի առաջին հերթին բնագավառի ինքնությունը՝ մասնագիտական գործունեության արժեքային հիմքերը, էթիկական սկզբունքները և միջամտության հնարավոր սահմանները: Մասնագիտական միավորումների բացակայության դեպքում կիրառական հոգեբանությունը մեծ հաշվով չի կարող դերակատարում ունենալ հասարակության մեջ, քանի որ գործունեությունը կլինի հատվածային, ցրված և ոչ համաձայնեցված:

Ռալֆ Գոլդշեյնը «Խորհրդատվական հոգեբանության ապագան» հոդվածի վերջաբանում նշում է. «Եթե հոգեբանության միջոցով մենք իրոք ինչ-որ բան ունենք տալու հասարակությանը, քանի որ նա կրում է իր մեջ ավելի շատ ներքին, քան կոմերցիոն բարօրություն, ապա այդ բարօրությունը նրա փիլիսոփայական արժեքների և նպատակների մեջ է: Այսպիսով, հոգեբան-խորհրդատուի, հոգեթերապևտի, հոգեվերլուծողի դիրքավորումը ավելի շատ էթիկական հարց է, ինչը պահանջում է պրակտիկ մասնագետներից ավելին, քան միայն կոմպետենցիաներ փոխանցելը: Մենք պետք է դավանենք (այս բառի հենց կրոնական իմաստով) այդ արժեքները մեր աշխատանքի բոլոր ձևերում և պետք է առաջադրենք այդ արժեքները հասարակությանը, նախքան նրա կողմից (բժշկական) տեխնոլոգիաների միջոցով անարդյունավետ բուժման ենթարկվելը, գիտակցելը և մեզ հարցնելը, թե ինչու մենք չենք արել ավելին»[37]: Քանի որ խորհրդատվական հոգեբանության մեջ ամենահիմնարար արժեքը մարդն է իր ամբողջականության մեջ, որը գտնվում է «այստեղ և հիմա» իր ներանձնային և միջանձնային սուբյեկտիվ փորձառության հետ, այլ ոչ միայն ախտանիշներ ունեցող, կազմակերպչական վարք դրսևորող ավանդույթներ կրող «օբյեկտ» է, ապա մասնագիտական գործունեության մեկ այլ մարտահրավեր կապված է ինստիտուցիոնալացված՝ ֆորմալ և ոչ ֆորմալ մշակույթի սահմանափակումները հաղթահարելու հետ, եթե դրանք ընկճում են, սահմանափակում են մարդու ներքին ազատության դրսևորումները: Այս իմաստով նորից մեջբերենք Գոլդշեյնի բառերը. «Մենք չենք կարող մնալ չեզոք սոցիալական և քաղաքական համատեքստի հանդեպ, քանի որ մենք ուսումնասիրում ենք արտաքին իրադարձությունների ազդեցությունը մարդու ներքին փորձառության վրա»[38]:

Վերադառնալով խորհրդատվական հոգեբանության ինքնության հարցերին և ամփոփելով հոգեբանական խորհրդատվության՝ որպես պրակտիկ գործունեության վերը քննարկված մարտահրավերները՝ եզրակացնում ենք, որ այս գործունեությունը, ուղղված լինելով անձի փո-

---

[37] **Goldshtein R.** (2010) The future of counselling psychology. *Handbook of counselling psychology*, *3*, 671-680, էջ 680:

[38] Նույն տեղում, էջ 677:

խակերպմանը և վարքի փոփոխմանը, միևնույն ժամանակ՝ անձի ամբողջականության զգացման պահպանմանը, ուղղակիորեն անդրադառնում է նաև մարդու շրջապատի վրա ինչպես միջանձնային հարաբերություններում, այնպես էլ դրանից դուրս՝ սոցիալական տարբեր ինտերակցիաներում և պրակտիկաներում՝ ձևավորելով որոշակի նոր՝ «դեմոկրատական» մշակույթ։

Բանալի բառեր – *հոգեբանական խորհրդատվություն, խորհրդատվական հոգեբանություն, հոգեբան-խորհրդատու, հոգեկան առողջություն, առողջության ոլորտի մասնագետ, անձի ամբողջականություն, անձի ուժեղ կողմերի վրա հիմնված մոտեցում, սուբյեկտիվ և ինտերսուբյեկտիվ փորձառություն*

ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ – ***Հոգեբանական խորհրդատվության և խորհրդատվական հոգեբանության ձևավորումն ու զարգացումը*** – Հոդվածը նվիրված է խորհրդատվական հոգեբանության՝ որպես առանձին կիրառական բնագավառի և մասնագիտության քննարկմանը։ Ներկայացված է խորհրդատվական հոգեբանության մասնագիտության ձևավորման ակնարկ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում և Ավստրալիայում, ինչպես նաև սահմանված է խորհրդատվական հոգեբանության խնդիրների շրջանակը և զարգացման միտումները։ Հոդվածի վերջում ուրվագծվում է Հայաստանում խորհրդատվական հոգեբանության խնդիրների շրջանակը և զարգացման միտումները։

НАРИНЕ ХАЧАТРЯН – ***Психологическое консультирование и консультативнная психология: формирование и тенденции развития.*** – Статья посвящена консультативной психологии как отдельной прикладной отрасли и специальности в психологии. Даётся краткий очерк формирования консультативной психологии как специальности в Америке, Англии, Канаде и в Австралии, а также определяется круг её задач и тенденции развития. В конце статьи очерчивается круг проблем, статус и насущные проблемы консультативной психологии в Армении.

Ключевые слова: *психологическое консультирование, консультативная психология, психолог-консультант, психическое здоровье, специалист в области здравохранения, целостность личности, подхов, основанный на сильных сторонах личности, субъективный и интерсубъективный опыт*

NARINE KHACHATRYAN – ***Psychological Counselling and Counselling Psychology: Development Path, Current State and Trends.*** – The article presents counselling psychology as an applied field and specialty in psychology. A brief overview of the formation of counselling psychology as a specialty in the US, United Kingdom, Canada, and Australia is given, as well as the challenges and trends of the development of counselling psychology are determined. At the end of the article, the challenges and trends of the development of counselling psychology in Armenia are outlined.

Keywords*: psychological counselling, counselling psychology, counselling psychologist, mental health, health care provider, wholeness of personality, strength-based approach, subjective and intersubjective experience*